Արձանագրություն 3

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան «11» մարտի 2021թ.

Ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝

Արմեն Ամրոյան

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ

Հայկ Հակոբյան

Մարի Ստեփանյան

Քարտուղար՝

Երանուհի Սարգսյան

Օրակարգ

1. **Ընթացակարգի գնահատում**

1.1 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/16 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ Ա/Ձ Մուշեղ Ավետիսյանի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում / Հավելված 1.1 / նշված չէր առաջարկվող ապրանքի տուփի զանգվածը և թերթերի քանակը, «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում / Հավելված 1.1 / նշված չէր առաջարկվող ապրանքի չափերի ստանդարտներից համարվող ISO 9706, ինչպես նաև ապրանքի պայծառությունը, անթափանցելիությունը, սպիտակությունը և հաստությունը, տուփի զանգվածը՝ գործարանային փաթեթավորմամբ: Գնահատող հանձնաժողովը որոշել էր կասեցնել նիստը, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը և առաջարկել վերոգրյալ մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակիցները չեն շտկել առկա անհամապատասխանությունները, սահմանված ժամկետում:

Ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը մերժել Ա/Ձ Մուշեղ Ավետիսյանի և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի հայտերը և տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ/ ենթակետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ–0

2. ***Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.***

2.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/16 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության մայիսի 4-ի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն, «Առէա պապիրուս» ՍՊԸ-ն, «Սմարթլայն» ՍՊԸ-ն, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 2021թ. մարտի 16-ին, ժամը 14:00-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների 1-ին չափաբաժնի մասով, որը տեղի կունենա Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Գյուրջյան փող., 10 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Ամրոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Հակոբյան

_____ Մ. Ստեփանյան

Գնումները համակարգող՝ _____ Ե. Սարգսյան